**Մրցույթ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Ծովինար գյուղի Արծրուն Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (10 դասաժամ), ռուսաց լեզվի (4 դասաժամ), աշխարհագրության (10 դասաժամ), ինֆորմատիկայի (6 դասաժամ) և դասվարի (13 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար**

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:
Մրցույթին մասնակցելու համար անձը տնօրենի կողմից նշանակված պատասխանատու աշխատակցին է ներկայացնում՝

1) Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար՝ 3Х4 չափսի,
2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
5)ինքնակենսագրություն (Ձև 5),
6)այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք հավաստող փաստաթուղթ,
7) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9) որակավորման տարակարգ (առկայության դեպքում):

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ 2022 թվականի սեպտեմբերի 5-ից մինչև սեպտեմբերի 16-ը ներառյալ, ամեն օր, ժամը 10-ից 15-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:
Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:
Մրցույթները տեղի կունենան **2022 թ սեպտեմբերի 20-ին ժամը 14:00-ին** ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղի Արծրուն Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցե՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Ծովինար, 1 թղմ., 3 փող., 33, ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղի Արծրուն Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել 093-20-89-90, 094140205 հեռախոսահամարներով: